

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 10 ՄԱՅԻՍԻ 2019Թ.
№ 10 (5)

... Սյունիքը
լավագույնն է...
որպես ազգային
ոգու ու ավանդների
պահեստարան:

Ղեկնող Ալիշան
«Սիսական»



Մեծ Հայրենականում զոհված կապանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը Բաղարուրի հուշահամալիրում:

«Ամահների գնդի» քայլերը նաեւ Սյունիքում

Մարզկենտրոն Կապանում Հաղթանակի եւ խաղաղության տոնին նվիրված միջոցառումները սկսվեցին Կապանի համայնքապետարանի պուրակից, որտեղ հավաքվել էին «Հայաստանի անմահ զույգեր» հասարակական կազմակերպության նախաձեռնած քայլերի մասնակիցները: Այսօրվա մասնակցում էին 300-ից ավելի հոգի, հիմնականում մարզկենտրոնի տարբեր դպրոցների աշակերտներ: Նրանց ձեռքերին Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան գոյամարտում, Արիւյան քառօրյա հակամարտության ժամանակ զոհվածների դիմանկարներն էին: Քայլերը համակարգող, ուստիկանության կապիտան Դավիթ Գրիգորյանի փոխանցմամբ՝ երկրորդ անգամ է Կապանում անցկացվում նման միջոցառում, այս անգամ հանդիսավորությամբ ու շուքով: Դավիթը 2016 թ. մայիսի 9-ին Սանկտ-Պետերբուրգում իր պապի լուսանկարով մասնակցել է «Ամահների գնդի» երթին: Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության աջակցությամբ որոշել է եւս կազմակերպել «Ամահների գնդի» քայլերը: Նրա պապը՝ Երվանդ Գրիգորյանը՝ Վերին Խոտանան գյուղից, 1941թ. մեկնել է պատերազմ, մարտնչել Առաջին բելառուսական ռազմաճակատում, 1943-ին Կերչոն ուղքից վիրավորվել է, գործարկվել է անցել խաղաղ աշխատանքի: Կապանից Հայրենական մեծ պատերազմի վետերաններից չորսն են մնացել: Նրանցից Աշոտ Դավթյանը, ում առողջությունը դեռեւս ներում է դուրս գալ փողոց, եկել էր հարգելու մարտի դաշտում ընկած իր զինակիցների հիշատակը: Գործող բանակ է գորակազմել 1942-ին. կռվել է Թամանյան դիվիզիայի շարքերում, ծանր ու դժվարին մարտերով հասել Բեռլին: Ծանր օրեր շատ են եղել, բայց ասում է, որ ամենադժվարն Օդերի գետանցումն էր... Զույգ ման Ավետիսյանի հետ մի գնդում է եղել, հերոսի հուշարձանի պատվանդանին ծաղիկներ դնելիս հուշերով նրա հետ էր:

Սյունեցիների ավանդը Մեծ հայրենականում

Պատերազմները որքան դաժան, բայց եւ ավարտվում են երբեւէ, մի օր: Եվ այդ օրը դառնում է հաղթանակի օր նրանց համար, ովքեր հաղթում են:
74 տարի առաջ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Եվ մայիսի 9-ը դարձավ Հաղթանակի օր:
Մեր պատմության հերոսական այդ էջի վերաիմաստավորման շատ փորձեր եղան, սակայն հաղթանակեց բանականությունը: Պետական վավերացում ստացավ այն ճշմարտությունը, որ հաղթանակը ձեռք է բերվել նաեւ մեր հայրերի ու պապերի արյամբ, որ այդ կռիվը նաեւ մեր կռիվն է եղել՝ հայերիս կռիվը:
Հայ ժողովրդի հազարավոր դուստրեր եւ որդիներ մեկնեցին Մեծ հայրենական իրենց հետ տանելով մինչեւ վերջ կռվելու եւ հաղ-

թելու ոգին: Եվ նրանք վերադարձան ու չվերադարձան: Եվ նրանք չորս տարին դարձրին պատմություն: Պատմություն կարոտի, սպասման, հերոսության եւ սխրանքի, եռանկյունի մամակի ու... արյան:
Հայրենի տունը վերադարձողներին ընդունեց նույն հպարտությամբ, ինչ հպարտությամբ ճանապարհել էր: Իսկ ռազմի դաշտում ընկած ավելի քան 200 հազար հայորդիներին իր գրկում պահեց՝ իբրեւ հուշարձան, իբրեւ Անհայտ զինվոր, իբրեւ հաղթանակի հուշաքար, իբրեւ հպարտություն: Նրանք կռվեցին ու զոհվեցին նաեւ այսօրվա համար: Եվ մեր այսօրը նաեւ նրանց շնորհիվ է...
Երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի դեմ մղած պատերազմին մասնակցեց 19064 սյունեցի: Նրանք ցուցաբերեցին մարտնչող

ոգի: Իսկ տասներկու հոգի գրանցվեց հայագրի հերոսների շարքում: 8732 սյունեցի այլեւս չվերադարձան, եւ մարզի տարբեր բնակավայրերում երախտապարտ մեղրեցիները, կապանցիները, գորիսեցիները ու սիսիանցիները բարձրագրին 118 հուշարձան՝ նրանց հիշատակը հավերժացնելու համար:
Հայրենական մեծ պատերազմի տարիներին հերոսական կյանքով էր ապրում մեր երկրամասը: Աշխատանքային մոր բնագծեր արձանագրեցին կապանցի լեռնագործները: 1942թ. մայիսին կյանք տոնեցին հայկական 89-րդ դիվիզիայի մարտիկներին ռազմաճակատ այցելեց Մեղրիի շրջանի պատվիրակությունը, որն իր հետ տարել էր նվերների ամբողջ մի գնացք (միրգ, գինի, հանդերձանք):

էջ 3

Բարի ընդառաջ՝ մեծ հայրենակցի՝ Ակսել Բակունցի ծննդյան 120-րդ տարեդարձին

Ակսել Բակունցի տուն-թանգարանը հիմնադրվել է 1968 թվականին Գորիսի այն տանը, որտեղ ծնվել է 20-րդ դարի հայ արձակագիր Ակսել Բակունցը (1899-1937):
Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի մասնաճյուղն է:
Տուն-թանգարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1970 թ. սեպտեմբերի 17-ին: Մինչ այդ տան կեսը վաճառված է եղել:
1970 թվականին՝ Բակունցի 90-ամյակի կապակցությամբ, տունը հետ է գնվել:
2011թ. կատարվել է թանգարանի հիմնադրում. փոխվել է տանիքը, ներքին հարդարման աշխատանքներ են կատարվել: Ձգալի աշխատանքներ են իրականացվել նաեւ բակում:
2012 թ. հարդարվել է դուրսը, տեղադրվել է բազրիք, թանգարանը լուսավորվել է փողոցի կողմից:
Թանգարանն ունի շուրջ 500 ցուցանմուշ, այդ թվում՝ լուսանկարներ, իրեր, առկա են

նաեւ հազարավոր գիտաօժանդակ նյութեր: Դրանք ներկայացնում են գրողի ուսումնառության տարիները, զինվորական կյանքը, գրական բեղմնավոր գործունեությունը: Այստեղ է պահվել նաեւ հարուստ գրադարանը:
Հունիսի 13-ին լրանում է մեծ արձակագրի 120-ամյակը:
Ակսել Բակունցի տուն-թանգարանն ինչպե՞ս է պատրաստվում նշել այն, ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում նրան ընդառաջ, ի՞նչ ծրագրեր ունեն եւ սկսվել է արդյոք մեկնարկը:
Այս եւ այլ հարցերի շուրջ է գրույցը տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանի հետ (լուսանկարում):
Շոշափվում են նաեւ թանգարանում տիրող հոգեբարոյական իրավիճակին առնչվող հարցեր. չէ՞ որ ցանկացած տան մեջ որեւէ միջոցառում նշելիս՝ ամենակարեւորն ուրախ սիրտն ու համերաշխ սերն է:



էջ 2

էջ 5

Բակալավրիատի ընդունելություն ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2019/2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՅԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Ծածկագիրը	Բուհը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները					Ընդունելության տեղ/այդ թվում			Ուսման վարձը հազ. դրամ	
		մրցութային			նշ մրցութային	անվճար	այդ թվում	վճարովի ԱՏ			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
28	Գորիսի պետական համալսարան						18			210	
011301.00.6	Մասնագիտական մանկավարժություն										
011401.05.6	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**			Հլգ(գ)*	3			12	240
011401.01.6	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**			Հլգ(գ)*	3			12	240
011401.18.6	Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)			Հլգ(գ)*	1			20	320
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(բ)	Հլգ(գ)				1			20	320
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(բ)	Անգլ(գ)			Հլգ(գ)*	2			18	370
011401.11.6	Կերպարվեստ	Գծն	Գն			Հլգ(գ)*	1			20	280
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն										
011301.01.6	Տարրական կրթություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**				2			30	340
041301.00.6	Կառավարում										
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)			2			23	360
042101.00.6	Իրավագիտություն										
042101.01.6	Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)						20	440
071401.00.6	Էլեկտրոնիկա										
071401.01.6	Էլեկտրոնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**			Հլգ(գ)*	3			20	260
053101.00.6	Քիմիա										
053101.02.6	Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**			Հլգ(գ)*				15	300

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մայիսի 6-ից մինչև հունիսի 1-ը՝ ժամը 09:30-ից 17:00-ն:

- Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝
- տեղեկանք (լուսանկարով) ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարվա շրջանավարտն այն չի ներկայացնում),
- 6 լուսանկար (364 սմ չափսի),
- փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության



դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,

- զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին,
 - ընդունելության կարգով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր,
 - միջազգային եւ հանրապետական մրցութային (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ,
- կենտրոնացված ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու եւ ձեւակերպելու համար 1500-ական ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիր:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (374 098)19-67-14:
Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 2:
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սյունյաց Երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Ռեզանցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 10.05.2019թ.: